ԹԱՓԱԴՈԼԱՔ

ԳԱՆԿԱԾԻՆ

Վերջերս Հայաստանի Խորհրդային Հանրապետական կառավարութեան յաձնարարութեամբ գնացել էի Թափադոլաք գեղը, ուր ներկայիս 700 տուն բնակչութիւն է ապրում։ Պարտաւորուած էի ուսումնասիրել դուրանը և գտնել յարմարաւոր անոնց անմոռնալի անունը փոխելու համար։ Խորհրդային կառավարութեան 15 տարուան շրջանում չէի այցելած և այս միջոցի ընթացքում եղած փոփոխութիւնը այնքան զգալի էր որ յափշտակեցի և ոգեւորութեան տակ մտածում էի, թէ ի՞նչ ծագում ունի այս այլանդակուած բառը։

Երբ արեւելքը զննում էի աչքս ընկաւ Գեալին–Ղայա լերան գագաթին, ուր 1908թ. այցելութիւնս յիշեցի, ուր տեսել էի Անահիտի արձանի պատուանդանը, գագաթի շուրջը սփռուած գրանիթի մանրուքները, որոնք ցոյց էին տալիս այն ջախջախումները, որոնք կատարուել էին մեզնից տասնեւվեց դար առաջ հայերի քրիստոնէութեան դարձի ժամանակ՝ հոգեւորականների, նախարարների և բիւզանդական կայսերական փաղանգների ձեռքով, որոնք տքնել էին բնականաբար կրօնական նպատակով ջնջել վիշապազանց ջրի, պաշտամունքը, Անահիտի յիշատակարանը ի սպառ անհետացնելու, մոռացութեան մատնելու նկրտումներով։

Այս մտքերը ինձ մտաւորապէս տարին Թեսսաղիայի Ոլիմպոսի բարձունքները, Զեւսի տոհմական տունը իր երկսեռ զաւակներով, սրանց Արիական տոհմական կապերը Հայկ–դիւցազնի, Վահագնի, Անահիտի և այլոց հետ։ Նկատելի է, ինչպէս որ բանաստեղծել են թէ Աթենաս Պալլասը զրահաւորուած ծնունդ է առել Զեւսի գանկից, միեւնոյն առասպելով էլ Ահուրամազդայի գանկից դուրս է եկել Հայաստանի կեցուցիչ ու փրկիչ Անահիտը. ինչպէս աւանդում է Ագաթանգեղոս, որը այդ առասպելներով ամեցնում, բեղմնաւորում էր մայրերին և երկիրը լցնում կտրիճ զաւակներով աւազի հատերից աւելի բազմաթիւ։ Եւ շրջապատս այնքան բազմաթիւ երեխաներ էին բռնել, որ թւում էր թէ այս երկիրը այսքան առատ երկսեռ երեխաներ էր մատակարարում հայաբակութեան անսպառ սերունդով։

Գանկածնի առասպելը Արեգ–կայծից (Արագածից) անցել էր Հարսնքարի բարձունքը, կեանք էր տուել գանկածնին, այդ տեղից Պելասքները, Ցուսքերը և Կելտերը տարել էին հասցրել Թեսսալիայի Ոլիմպական բարձունքները, Ցուսքերը Թոսքանա, Կելտերը Գալլիա, հիմնել էին քաղաքներ Գանկածնի ուրագծով և տարածել էին կիկլոպեան ամրոցների նման այդ գաղթավայրերում, ճիշտ այնպէս, ինչպէս Արեգ–կայծի տակ Հարսնքարի լերան գագաթին կանգնեցրել էին Անահիտի–Գանկածնի գագաթին, որ հովանաւորել է Գիմբրուայի (Գիւմրուայ) քաղաքին եօթանասուն դարերից ի վեր, ինչպէս վկայում է Շամխոռամանի Դ.ի արձանագրութիւնը 825 տարի առաջ մեր թւագրութիւնից։ (Տե՛ս 157 երես, 60 տող, Սանտալճեանի 1901 թ. Վիեննայի մէջ տպագրած Ասորական արձանագրութիւնները)։

Անտաբակոյս Հարսնքարի գագաթին Անահիտի յիշատակարանի աւերակները զննեցին Սելջուքները և ժողովրդական աւանդութիւնը թարգմանեցին և մեզ ժառանգութիւն թողին.

Թափա = գանկ.
Դոլ = սերուած. և
Աք = բարձունք,
Թափադոլաք — Գանկածին։

Այսպէս սելջուքները հազարաւոր հին անունները թարգմանել և մեզ թողել են ուսումնասիրելու մեր գետերի աւազանները։

28 Մայիսի 1934 թ. Լենինական

ԱՏՐՊԵՏ

ԾԱՍԱՑՈՑՑԸ

Միշտ նոյն շրջով Բոմբատուրի[1]
Բազմած է մեր Ժամացոյցն հին.
Ինչպէս հրպարտ իշխանուհի
Չի խոնարհիր ժամանակին։

Կուրծքին ներքեւն յախճապակեայ
Սիրտ մը չափով կը բաբախէ.
Զայն չէս կարծեր չոր մեքենայ
Ոսկեզօծուած և արոյրէ։

Հին զարդերուն ոսկեցոլուն
Կը նազի հոն զերդ դեցուհի,
Ոչ մէկ ուրիշ գեղեցկութիւն
Դահլիճին մէջ կը յանդգնի։

Զայն կը տեսնեմ որմին յեցած,
Հաղիւ կանգուն, բայց դեռ կամշոտ
Կը նայի լուռ և անկասկած
Հորիզոններն անառաւօտ։

Իր սրլաքներն ոսկեբեւեռ
Կը չափեն քայլն արեգակին,
Եւ մարդկութիւն և տարրներ
Ժամանակով կը հոլովին։

Վաղուց փոխուած է ամէն բան,
Ուրիշ դէմքեր, ուրիշ լեզու.
Բայց դեռ անոր խիստ հրրաման
Կը ստիպէ մեզ խոնարհելու։

Կը հընչէ ձայնն հանդարտ ու վեհ,
Կ'ապրին իր հետ դարերն երազ.
Փառքը կարծես դեռ կը հիւսէ
Առագաստներ ոսկեսարաս։

Քանի ծառայ և աղախին
Երփնահանդերձ լուռ կը սպասեն.
Կարծես նորէն բամբիշն է հին
Որ դուրս կու գայ առագաստէն.

Կամ կը տրուի միջօրէին
Նըշանն հարուստ ինճոյքներուն.
Կը հրրահրէ երգը պարին
Առեղծուածեան այդ դարերուն։

Դահլիճներէն կ'անցնի յուշիկ
Եւ Բամբատուրն հասակագեղ.
Որ շրջարուած է զերդ Աստղիկ,
Տենչալով միշտ ապրիլ այստեղ։

Ու Ժամացոյցն ամէն վայրկեան
Անցեալին հետ կը խառնըւի.
Կու լայ կարծես մարդու նըման
Որ կեանքն այսպէս շուտով կ'անցնի։

Իր կողերուն հարուստ ոսկին
Հընութեան սեւ քօղն է առած.
Ամէն կողմէն վար կը թափին
Փայլերն անգոյն և տիրամած։

Միայն դափնեայ գըլուանգներ,
Եւ քաջերու զինանըշանն
Դեռ կը մատնեն խուսող փառքերն
Օրերուն հետ մոլորական։

Ինքը դարձեալ անդուլ ճիգով
Կը վարէ միշտ ժամերն առաջ.
Ամառ ձըմեռ կ'անցնին կարգով
Հարուածներով պարտաճանաչ։

Սըրտերու մինչ խորը կ'երթայ
Սըլաքներուն քայլն երկաթի.
Եւ անողոք կը վըճռէ նա
Ճակատագիրն այս աշխարհի։

ՎԱՆԱՏՈՒՐ

1. Ժամացոյցը կը գտնուի Փարիզի Սամուէլ–Մուրատեան վարժարանի գահլիճին մէջ, որ ժամանակին տիկին Բոմբատուրի պալատներէն մին էր։ Շէնքը կառուցուած է 1701–ին։

digitised by A.R.A.R.@